ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, տնտեսագիտության թեկնածու

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, բազմարկչի էֆեկտ, մրցունակություն, վճարային հաշվեկշիռ, զբոսաշրջային մարքեթինգ*

Զբոսաշրջությունն ունի սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական ազդեցություն, օժտված է բազմարկչի էֆեկտով, շատ երկրներում համարվում է եկամտի ստացման և աշխատատեղերի ստեղծման հիմնական աղբյուր, ուստի դրա զարգացումը կնպաստի նաև երկրի տնտեսական զարգացմանը: Հոդվածում ներկայացվել է ոլորտի առկա վիճակը, գնահատվել են զբոսաշրջային բազմարկչի էֆեկտը, զբոսաշրջային որոշ ցուցանիշների միջև կոռելյացիոն կապերը, վերլուծվել են զբոսաշրջության զարգացման և մրցունակության բարձրացման հիմնական առաջնահերթությունները ՀՀ-ում:

Զբոսաշրջությունն իրավամբ կարելի է համարել համաշխարհային տնտեսության ամենաարագ զարգացող և եկամտաբեր ճյուղերից մեկը, քանի որ միջազգային զբոսաշրջիկների թիվը 2016 թ. ամբողջ աշխարհում հասել է 1235 մլն-ի, իսկ ոլորտն ապահովել է համաշխարհային ՀՆԱ-ի 10.2%-ը (7.6 տրլն դոլար) և 297.8 մլն աշխատատեղ[1]:

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016 թ. ՀՀ է ժամանել 1259657 զբոսաշրջիկ (2015 թ. համեմատ ցուցանիշն աճել է 5,7%-ով),[2] իսկ ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 979968 մարդ[3]:

Զբոսաշրջությունն ունի սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական, քաղաքական նշանակություն երկրի համար.

- Զբոսաշրջության սոցիալ-տնտեսական նշանակությունն այն է, որ խթանում է ներդրումները, նպաստում է աշխատատեղերի ստեղծմանը, համայքների զարգացմանը, աղքատության հաղթահարմանը՝ հատկապես գյուղական համայքներում, ենթակառուցվածքների զարգացմանը, երկիրը տարադրամի փոխանակումից ստանում է շահույթ, բացի այդ, զբոսաշրջությունն ունի նաև բազմարկչի էֆեկտ:
- Զբոսաշրջության մշակութային նշանակությունն այն է, որ նպաստել մշակութային և պատմական ավանդույթների վերականգմանը, պահպանմանն ու փոխանց-

[1] WTTC Travel & Tourism Economic Impact 2017World, p. 1, www.wttc.org
[2] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվարին, էջ 88, http://armstat.am/file/article/sv_01_17a_421.pdf
[3] Նույն տեղում, էջ 90, http://armstat.am/file/article/sv_01_17a_422.pdf

մանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի զարգացմանը:

- Զբոսաշրջության բնապահպանական նշանակությունն այն է, որ նպաստում է շրջակա միջավայրի պահպանությանը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, կենսաբազմազանության վերականգնմանը: Օրինակ՝ էկոզբոսաշրջության նպատակն է բարձրացնել հասարակության գիտակցությունը բնության արժեքի վերաբերյալ՝ ձևավորելով բնության պահպանության համապատասխան վարքագիծ:
- Զբոսաշրջությունն ունի նաև էական քաղաքական նշանակություն: Մի կողմից՝ տարբեր ազգերի մարդկանց փոխադարձ շփումները, մշակույթների ու ավանդույթների փոխճանաչումն ու ընկալումը նպաստում են միջազգային խաղաղության հաստատմանը, մյուս կողմից էլ՝ զբոսաշրջությունն ապահովում է երկրի նկարագրի ձևավորումը՝ նպաստելով երկրի միջազգային ճանաչմանը, դիվանագիտակա նհարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը և այլն:



	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ներգնա զբոսաշրջիկներ	510287	558443	575281	683979	757935	843330	1081985	1203746	1192120	1259657
Արտագնա զբոսաշրջիկներ	467574	515547	526193	640032	714953	806555	1080022	1198060	1187369	1262687
Ներքին զբոսաշրջիկներ	369005	447234	435674	456432	489419	514771	669540	859703	871888	979968

Գծապատկեր 1. ***ՀՀ ներգնա, արտագնա և ներքին զբոսաշրջիկների թիվը 2007–2016 թթ.***[1]

Ըստ Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհրդի հրապարակումների՝ ՀՀ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում 2016 թ. կազմել է 736 մլրդ դրամ կամ 1.5 մլրդ դոլար (ՀՆԱ 14,0%-ը), իսկ ուղղակի ներդրումը՝ 0.4 մլրդ

[1] Տվյալներն ըստ ԱՎԾ՝ 2008–2017 թթ. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ կատարված հրապարակումների վրա:

դոլար: Զբոսաշրջության համախառն ազդեցությունը զբաղվածության վրա կազմել է 143500 մարդ (զբաղվածների 12,5%-ը), իսկ ուղղակի ազդեցությունը՝ 38500 մարդ: Զբոսաշրջության ոլորտում ներդրումները կազմել են 48.9 մլրդ դրամ կամ 0.1 մլրդ դոլար (ընդհանուր ներդրումների 4.4%-ը)[1]: Զբոսաշրջության սոցիալ-տնտեսական ազդեցությունը գնահատելու համար կիրառենք զբոսաշրջային բազմարկչի էֆեկտը՝ հիմնվելով ՀՆԱ-ում և զբաղվածության մեջ զբոսաշրջության ունեցած համախառն և ուղղակի ազդեցությունների հարաբերության վրա[2], կստանանք.

ՀՆԱ-ի մուլտիպլիկատոր = 1.5 / 0.4 ≈ 3.75(1)

Զբաղվածության մուլտիպլիկատոր = 143500 / 38500 ≈ 3.72 (2)

Ուստի կարող ենք ասել, որ զբոսաշրջությունն ունի էական սոցիալ-տնտեսական ազդեցություն, քանի որ այդ ոլորտում ներդրված 1 դոլարը ստեղծում է մոտ 3.75 $ տնտեսության մեջ և 3.72 նոր աշխատատեղ:

Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև Պիրսոնի R գործակիցը 0.827 է, իսկ դետերմինացիայի գործակիցը՝ R^2-ն՝ 0.685, այսինքն՝ զբոսաշրջիկների թվի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ փոփոխության վրա 68% է (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***Ռեգրեսիոն մոդելը ՀՀ ներքին ու ներգնա զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև***

[1] WTTC Travel & Tourism Economic Impact 2017 Armenia, p. 1, 7; www.wttc.org

[2] Stynes D., (1999) Economic Impacts of Tourism, https://www.msu.edu/course/prr/840/econimpact/pdf/ecimpvol1.pdf

Ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի և զբոսաշրջության մեջ զբաղվածների թվի միջև Պիրսոնի գործակիցը 0.946 է, այսինքն՝ կապը շատ ուժեղ է, նույնը կարելի է ասել նաև զբոսաշրջիկների թվի և կացության ու հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալի միջև կապի մասին (0.987), իսկ ահա ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվի և մանրածախ առևտրի շրջանառության միջև կապը (0.533) միջին է (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը որոշ ցուցանիշների միջև

	ՀՆԱ	Մանրածախ առևտրի շրջանառությունը	Զբոսաշրջության մեջ զբաղվածների ընդհանուր թիվը	Կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը
Ներքին և ներգնա զբոսաշրջիկների թիվը	**0.827**	**0.533**	**0.946**	**0.987**

Ինչպես գիտենք, զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթահաշվի ճանապարհորդության բաժինը 2015 թ. գնահատվել է -59.96 մլն դոլար (կրեդիտ՝ 935.82 մլն դոլար, դեբետ՝ 995.78 մլն դոլար)[1], այսինքն՝ մեր արտագնա զբոսաշրջիկներն ավելի շատ գումար են ծախսում դրսում, քան ներգնա զբոսաշրջիկները ՀՀ-ում՝ ապրանքների և ծառայությունների վրա: Կրեդիտի թիվը բաժանելով 2015 թ. ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվի վրա՝ կստանանք 1 զբոսաշրջիկի կատարած միջին ծախսը ՀՀ-ում՝ 785 դոլար:

Հաշվի առնելով ՀՀ հին պատմությունն ու հարուստ մշակութային ժառանգությունը, բարենպաստ կլիմայական պայմանները և կուրորտային ռեսուրսների առկայությունը, ազգային համեղ խոհանոցը և հյուրընկալության ավանդույթները, կրոնը և այլ գործոններ՝ կարող ենք ասել, որ Հայաստանում զարգացման մեծ հեռանկարներ ունեն պատմամշակութային, կրոնական, առողջարանային, գաստրոնոմիական, քաղաքային, արկածային, ագրո- և էկոզբոսաշրջության տեսակները:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած՝ «2017 թ. զբոսաշրջության մրցունակության զեկույցի»՝ Հայաստանը 136 երկրների շարքում եղել է 84-րդը՝ 3.53 գործակցով (2015 թ. 141 երկրների շարքում զբաղեցրել է 89-րդ տեղը՝ 3,42 գործակցով): 2017 թ. զբոսաշրջության ոլորտի ամենամրցունակ երկրներ համարվել են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան: Վրաստանը զեկույցում զբաղեցրել է 70-րդ, Ադրբեջանը՝ 71-րդ, Ռուսաստանը՝ 43-րդ, Թուրքիան՝ 44-րդ տեղը:

[1] Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, ՀՀ վճարային հաշվեկշիռը 2012–2015 թվականներին, էջ 17, http://www.armstat.am/file/article/bop_10_3.pdf

Աղյուսակ 2

ՀՀ զբոսաշրջության մրցունակության համաթիվը 2017 թ.[1]

Ցուցանիշ	*Դիրքը 136 երկրների շարքում*	*Գործակից (1-7)*
ՀՀ զբոսաշրջության մրցունակության համաթիվ	**84**	**3.53**
Գործարար միջավայր	39	4.9
Ապահովություն և անվտանգություն	34	5.9
Առողջություն և սանիտարահիգիենիկ պայմաններ	48	5.9
Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի շուկա	45	4.8
ՏՀՏ պատրաստվածություն	71	4.3
Զբոսաշրջության գերակայություններ	71	4.6
Միջազգային բացություն	95	2.6
Գնային մրցունակություն	80	4.8
Շրջակա միջավայրի կայունություն	102	3.8
Օդային տրանսպորտի ենթակառուցվածք	88	2.2
Վերգետնյա և նավահանգստային տրանսպորտի ենթակառուցվածք	88	2.9
Զբոսաշրջային ծառայությունների ենթակառուցվածք	74	3.9
Բնական ռեսուրսներ	89	2.6
Մշակութային ռեսուրսներ և գործարար ճամփորդություն	99	1.4

Այս տարի, ինչպես և նախորդ զեկույցում, հիմնախնդիրներ են համարվել զբոսաշրջային ենթակառուցվածքների որակը (90-րդ տեղ), ավիատոմսերի բարձր գները և օդանավակայանի վճարները (107-րդ տեղ), որակյալ աշխատուժ գտնելու դյուրինությունը (123-րդ տեղ), անձնակազմի վերապատրաստման աստիճանը (90-րդ տեղ), զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի և բրենդինգի ցածր արդյունավետությունը (95-րդ տեղ), շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի ու պահպանման ցածր մակարդակը (110-րդ տեղ), ճանապարհների որակը (80-րդ տեղ), բնական ակտիվների գրավչությունը (74-րդ տեղ) և այլն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք ասել, որ *զբոսաշրջության զարգացման նպատակով առաջնահերթություններ պետք է համարվեն զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավումը, զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացումը, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի ու պահպանման մակարդակի բարձրացումը, ոլորտի աշխատուժի պատրաստման և վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, զբոսաշրջային մարքեթինգի և բրենդինգի արդյունավետության բարձրացումը, ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը, վիճակագրական հաշվառման բարելավումը:*

Այսպիսով՝ զբոսաշրջությունն ունի էական սոցիալ-տնտեսական, մշակութային, բնապահպանական ազդեցություն, այն օժտված է հզոր մուլտիպլիկացիոն էֆեկտով, շատ երկրներում համարվում է եկամտի ստացման և աշխատատեղերի ստեղծման հիմնական աղբյուր, ուստի դրա զարգացումը կնպաստի նաև երկրի տնտեսական զարգացմանը:

[1] The Travel & Tourism Competitiveness Report 2017, World Economic Forum, Geneva, 2017, p.33, 84–85.

ГАЯНЕ ТОВМАСЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ВОЗДЕЙСТВИЕ ТУРИЗМА НА РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ РА

Ключевые слова: *туризм, эффект мультипликатора, конкурентоспособность, платежный баланс, маркетинг туризма*

Туризм имеет социально-экономический, культурный, экологический эффект, эффект мультипликатора и является основным источником дохода и создания рабочих мест во многих странах, поэтому его продвижение также будет способствовать экономическому развитию страны. В статье представлено текущее состояние сферы, оценивается эффект мультипликатора туризма и корреляционные отношения между некоторыми показателями туризма, анализированы основные приоритеты повышения конкурентоспособности и развития туризма в Армении.

GAYANE TOVMASYAN

SOCIAL-ECONOMIC IMPACT OF TOURISM ON THE ECONOMIC DEVELOPMENT OF THE RA

Key words: *tourism, multiplier effect, competitiveness, balance of payments, tourism marketing*

Tourism has a socio-economic, cultural, environmental impact, multiplier effect, and is a major source of income and job creation in many countries. The article outlines the current state of the sphere; the tourism multiplier effect and the correlation relations among some tourism indicators were estimated, the main priorities for raising competitiveness and developing tourism in Armenia are analyzed.

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *մենաշնորհ, բնական մենաշնորհ, մրցակցություն, մասշտաբի էֆեկտ, պահանջարկ, ենթակառուցվածք*

Բնական մենաշնորհն առաջանում է օբյեկտիվ պատճառներով, երբ տվյալ ապրանքի պահանջարկն ավելի լավ է բավարարվում մեկ ընկերության կողմից: Բնական մենաշնորհներն իրենց հետ բերում են ինչպես դրական, այնպես էլ բացասական երևույթներ: Հետևաբար՝ պետության կամ պետության կողմից լիազորված հատուկ մարմինը պետք է իր ջանքերն ուղղի՝ պաշտպանելու հասարակական շահերը, իսկ մյուս կողմից՝ պահպանելու իրենց ձեռնարկության համար բնականոն աշխատանքային պայմաններ: